ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **<u>Անունը, ազգանունը՝</u>**

   Վահագն Գևորգյան

2. **<u>Զբաղեցրած պաշտոնը՝</u>**

   ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի նախագահ

3. **<u>Գործուղման վայրը և ժամկետները.</u>**

   ԻԻՀ (Թեհրան), 2023 թվականի փետրվարի 22-ից 26-ը

4. **<u>Հրավիրող կողմը.</u>**

   ԻԻՀ էներգետիկայի նախարար Ալի Աքբար Մեհրաբիանի

5. **<u>Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).</u>**

   Մասնակցություն Քաղաքային ջրերի կառավարման տարածաշրջանային /RCUWM/ կենտրոնի Կառավարման խորհրդի 13-րդ նիստին:

6. **<u>Քննարկված թեմաները.</u>**

   Նիստի ընթացքում քննարկվել են տարածաշրջանային մակարդակում ջրային ռեսուրսների համալիր կառավարման խթանման, փորձի և տեխնիկական գիտելիքների փոխանցման հետ կապված հարցեր, կենսապահպանման, վերաբնականացման և դրանց հավասարակշռության պայմանների պահպանման մոտեցմամբ՝ գետերի ինտեգրված կառավարման ոլորտային հարցեր: Կարևորվեցին տարածաշրջանային համընդհանուր մեխանիզմների մշակմամբ՝ քաղաքային ջրային համակարգերը կլիմայի փոփոխության դեմ հարմարեցնելու հիմնախնդիրները, երաշտի ռիսկի մոնիտորինգի տարածաշրջանային համակարգի նախագծման և գործարկման հարցերը:

7. **<u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.</u>**

   Իրանի էներգետիկայի նախարար Ալի-Աքբար Մեհրաբյանի գլխավորությամբ միջոցառմանը մասնակցել են 15 երկրների և ութ անդամ կազմակերպությունների նախարարներ, պատգամավորներ և ներկայացուցիչներ: Տարածաշրջանում ջրի որակի բարելավման ուղղությամբ ուշադրության արժանացան կարողությունների զարգացման հետ կապված հարցերը՝ քաղաքային ջրային համակարգերի մասնագետների

կարողությունների զարգացումից մինչև կատարելագործում հասցնելու հետ կապված անհրաժեշտ միջոցառումները:
Այցի ընթացքում մասնակցել եմ նաև Ջրային արդյունաբերության ցուցահանդեսին, որտեղ ներկայացված էին երկրի ջրային և էլեկտրաէներգիայի ոլորտում գործող 10 խոշոր ընկերություններ, նրանց ձեռքբերումներն ու հնարավորությունները, որոնք ունեն միջազգային գործունեության պատմություն և իրենց արտադրանքի մի մասն արտահանվում է այլ երկրներ:

8. **<u>Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.</u>**

RCUWM Կառավարման խորհրդին ներկայացվեց RCUWM տնօրենի հաշվետվությունը, 12-րդ և 13-րդ Կառավարման խորհրդի նիստերի միջև կատարվող գործունեության և աշխատանքի վերաբերյալ 2023 թվականի պլանը: RCUWM Կառավարման խորհրդի կողմից ձևավորված մի շարք աշխատանքային խմբերի ներգրավածությամբ անդամ երկրները պայմանավորվել են ձեռնարկել ավելի նպատակային և ինտենսիվ աշխատանքներ վերը նշված խնդիրների և հարցերի լուծման ուղղությամբ: Տեղեկացնեմ, որ հայկական կողմը ներգրավված է «Կլիմայի և ջրաղբյուրների նվազեցմամբ պայմանավորված քաղաքային ջրերի արդյունավետ կառավարման ծրագրի» աշխատանքային խմբում, որի շրջանակներում նախատեսվում են համագործակցային ուղղորդված միջոցառումներ:

9. **<u>Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները"</u>**

Առաջարկվել է ջրի կայուն կառավարմանը, ջրային անվտանգությանը, շրջակա միջավայրի և ջրային դիվանագիտությանը, ջրային ռեսուրսների պահպանմանը և կլիմայի փոփոխության դեմ պայքարի արձագանքող մեթոդների մշակման նպատակով իրականացնել փորձի փոխանակում՝ միասնական մոդել մշակելու համար:

10. **<u>Ստորագրությունը, ամսաթիվը</u>**

01.03.2023 թ.